Հաստատված է 12.11.2025թ.

_____________Տ. Մելքոնյան

## ՀՀ ԿԳՄՍՆ «ԵՐԵՎԱՆԻ Ս. ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 184 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

## 2025-2026ՈՒՍՏԱՐԻ

# ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Հավանության է արժանացել հայոց լեզվի և գրականության մեթոդական միավորման 15.10.2025թ-ի N 4 նիստում

**Նախագծի ղեկավար՝ Մելինե Տիգրանյան**

| | |
|---|---|
| **Թեմա** | Ավ. Իսահակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքը |
| **Ուսումնական նախագծի անվանումը** | Ավ. Իսահակյանի «Համբերանքի չիբուխը»՝ որպես մարդկային փորձառության և կյանքի իմաստի որոնման պատմություն |
| **Առարկա** | Հայ գրականություն |
| **Ուսումնական տարի, կիսամյակ** | 2025-2026 ուստարի, առաջին կիսամյակ |
| **Դասարան** | XI դասարանի լեզվաբանական նպատակային խումբ 2 |
| **Տևողություն՝ սկիզբ և վերջնաժամկետ** | 6 շաբաթ (նոյեմբերի 13-դեկտեմբերի 16) |
| **ՏՏ գործիքներ** | Համակարգիչ, համացանց |
| **Նախագծի իրականացման փուլեր** | 1-ին փուլ -հիմնահարց<br>2-րդ փուլ -պլանավորում/նախագծում<br>3-րդ փուլ -որոնում<br>4-րդ փուլ -թեմայի ներկայացման նախապատրաստում<br>5-րդ փուլ -նախագծի ներկայացում |
| **Նախագծի տեսակը** | Ներառարկայական |
| **Նախագծի նպատակը** | 1. Ծանոթանալ «Համբերանքի չիբուխը» պատմվածքին<br>2. Նպաստել սովորողների ակտիվ գործունեության խթանմանը<br>3. Զարգացնել նյութը հետազոտելու, սովորածը այլ պայմաններում և միջավայրում կիրառելու ունեցած գիտելիքները, գիտելիքների բովանդակային և բազմակողմանիորեն զարգացման հմտություններ<br>4. Բացահայտել սովորողների անհատական առանձնահատկությունները և խթանել նրանց ստեղծարարական-հետազոտական կարողությունները |

| | |
|---|---|
| **Նախագծի վերջնարդյունքը** | 1. Ձևավորի հետաքրքրությունների հստակ շրջանակ՝ բացահայտելով մարդկային փորձառության բազմաշերտությունը:<br>2. Կարողանա հետազոտել ,համադրել , հակադրել հասանելի տեղեկույթը, գնահատի փաստարկները:<br>3. Կարողանա ստեղծել ուսումնական նյութ և ինքնարտահայտման արդիական հարթակներ:<br>4. Քննարկի Իսահակյանի ստեղծագործական մոտեցումները մարդու ներքին աշխարհը բացահայտելու գործում, դիտարկի ժամանակավրեպ կամ արդիական մոտեցումները:<br>5. Կերպարների վերլուծության միջոցով բացահայտի պատմվածքում արտացոլված սոցիալական անհավասարության, անարդարության ազդեցությունը անհատի և համայնքի վրա:<br>6. Գնահատի Իսահակյանի՝ մարդու արժեքային համակարգը ներկայացնելու վարպետությունը: |
| **Հնարավոր հետագա ազդեցությունը, վերջնարդյունքի կիրառելիությունը այլոց կողմից** | Լրացուցիչ ուսումնական նյութի ստեղծում ուսուցիչների և սովորողների համար: Ստեղծված նյութերը կտրամադրվեն դպրոցի գրադարանին: |
| **Նախագծի նկարագիրը՝ (ժամանակացույցը)** | **1-ին փուլ -Հիմնահարց (նոյեմբերի 13) ուսուցչի գործունեությունը՝** ներկայացնել նախագծի թեման, առաջարկել հիմնահարցը և ձևակերպել նպատակներն ու խնդիրները<br>**սովորողի գործունեությունը՝** իրականացնել հիմնահարցի նպատակների և խնդիրների ընկալում<br>**2-րդ փուլ -Պլանավորում/Նախագծում** |

| | |
|---|---|
| | **(նոյեմբերի 20)**<br>**ուսուցչի գործունեությունը՝**<br>կազմակերպել նախագծի<br>գործունեությունը, բաշխել<br>սովորողների դերերը, քննարկել<br>նախագծի ներկայացման հնարավոր<br>տարբերակները<br>**սովորողի գործունեությունը՝**<br>իրականացնել աշխատանքի<br>պլանավորում և բաժանում, ընտրել<br>ներկայացման հնարավոր ձևերը<br>**3-րդ փուլ -Որոնում**<br>**(նոյեմբերի 27, դեկտեմբերի 4)**<br><br>**ուսուցչի գործունեությունը՝**<br>տրամադրել խորհրդատվություն,<br>հսկել սովորողների աշխատանքը, տալ<br>նոր գիտելիք, կատարել թեմայի<br>ներկայացման փորձեր<br>**սովորողի գործունեությունը՝**<br>աշխատել ինքնուրույն,<br>յուրաքանչյուրն իր դերով,<br>խորհրդակցել իրար հետ, գտնել<br>նյութեր ներկայացման համար<br>**4-րդ փուլ -Թեմայի ներկայացում**<br>**(նախապատրաստում)**<br>**(դեկտեմբերի 11, 16)**<br>**ուսուցչի գործունեությունը՝**<br>կատարել դիտարկումներ, տալ<br>խորհուրդներ, պատրաստվել նախագծի<br>պաշտպանությանը<br>**սովորողի գործունեությունը՝**<br>վերլուծել տեղեկությունները,<br>կատարել հետազոտություններ,<br>աշխատել նախագծի վրա, պատրաստվել<br>պաշտպանությանը<br>**5-րդ փուլ -Շնորհանդես (նախագծի**<br>**ներկայացում)**<br>**(դեկտեմբերի 19)**<br>**ուսուցչի գործունեությունը՝**<br>լսել, հարցեր տալ սովորողներին,<br>ուղղորդել, գնահատել նրանց կատարած<br>աշխատանքի որակը<br>**սովորողի գործունեությունը՝**<br>ներկայացնել ուսումնական<br>նախագիծը հանրությանը, մասնակցել |

| | |
|---|---|
| | հանձնաժողովի քննարկմանը |
| **Կարողություններ, որոնք կզարգանան այս նախագծի ընթացքում** | • Սովորել սովորելու կարողություն<br>• Լեզվական գրագիտության կարողություն<br>• Թվային և մեդիա կարողություն<br>• Մշակութային կարողություն<br>• Ինքնաճանաչողական և սոցիալական կարողություն<br>• Ժողովրդավարական և քաղաքացիական կարողություն |
| **Ուսումնական նախագծի հիմնախնդիրը և մարտահրավերային հարցեր** | • Ուսումնասիրել գեղարվեստական նյութը<br>• Ներկայացնել գյուղի պատկերը պատմվածքում<br>• Բացահայտել սոցիալական անհավասարության, անարդարության ազդեցությունը գյուղացիների մտածելակերպի և վարքագծի վրա<br>• Քննարկել տեսակետների փոփոխությունները և դրանց առաջացման պատճառները (մշակույթ,մտածողություն, արժեհամակարգ,ազգային կամ պատկանելություն և այլն), դիտարկել ժամանակավրեպ կամ արդիական մոտեցումները |
| **Խմբին տրվող առաջադրանքներ** | • Ընթերցել Ավ. Իսահակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքը<br>• Ուսումնասիրել գյուղական հասարակությունը,անհավասար հողաբաժանման պատճառները<br>• Բացահայտել միջավայրի ազդեցությունը Օհանամու «աշխարհաթող»լինելու վրա<br>• Համադրել աշխարհաթողության գաղափարի դրսևորումները Ավ. Իսահակյանի տարբեր ստեղծագործություններում՝ նշելով դրանց ներքին |

| | |
|---|---|
| | պատճառներն ու գաղափարական հիմքերը:<br>• Պատրաստել սահիկաշար նյութի վերաբերյալ<br>• Օհան ամու նամակը՝ ուղղված գալիք սերունդներին |
| **Միջառարկայական կապեր՝** | Հասարակագիտություն,արվեստ |
| **Ուսումնական նախագծի ավարտուն արդյունքի (պրոդուկտի) ներկայացման տեսակը** | 1. Վերլուծական զեկույց<br>ա. թեմայի ներկայացում, տվյալների վերլուծություն, համեմատություն<br>բ. հետազոտությունների արդյունքներ,հիմնական հետևություններ<br>2. Տեսողական ներկայացում<br>ա. PowerPoint ծրագրով սահիկաշար<br>բ. տեսանյութ<br>3. Օհան ամու նամակը՝ ուղղված գալիք սերունդներին |
| **Ուսումնական նախագծի վերջնարդյունքների ներկայացման տեսակներ** | Սահիկաշար,տեսանյութ,Օհան ամու նամակը՝ ուղղված գալիք սերունդներին |
| **Հետագա հնարավոր ազդեցություն** | Բնօրինակի քննական,վերլուծական ուսումնասիրության խթանում |
| **Վերջնարդյունքի կիրառելիություն** | •Սահիկաշարի տեղադրումը դպրոցի կայքում<br>•Ուսումնական նյութի օգտագործում ուսումնական գործընթացում հայ գրականության ժամերին |
| **Հետազոտության աղբյուրներ** | 1. Ավ. Իսահակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքը<br>2. Հայ գրականության դասագիրք, հեղինակներ՝ Ա. Մակարյան,Ա. Ջրբաշյան,Հ. Հովհաննիսյան<br>3. Համացանց |

| Խմբի գործողությունները | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին խումբ | Խմբի անդամները | Անելիքները | Նախատեսված ժամկետները | Կատարման ժամկետը |
| 1 | Առաքելյան Էլիզա | Ընթերցել Ավ. Իսահակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքը, ուսումնասիրել գյուղական հասարակությունը, անհավասար հողաբաժանման պատճառները: Օգտվել դասագրքից, համացանցից կամ այլ աղբյուրներից: Պատրաստել սահիկաշար, էլեկտրոնային և թղթային կրիչներով ներկայացնել աշխատանքը: | 13. 11-16. 12. 2025 | 19. 12. 2025թ. |
| 2 | Ոսկանյան Անի | Ընթերցել Ավ. Իսահակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքը, բացահայտել միջավայրի ազդեցությունը Օհանամու «աշխարհաթող» լինելու վրա: Օգտվել դասագրքից, համացանցից կամ այլ աղբյուրներից: Պատրաստել սահիկաշար, էլեկտրոնային և թղթային կրիչներով ներկայացնել | 13. 11-16. 12. 2025 | 19. 12. 2025թ. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | աշխատանքը: | | |
| 3 | Գալստյան Սյուզաննա | Ընթերցել Ավ. Իսահակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքը, համադրել աշխարհաթողության գաղափարի դրսևորումները Ավ.Իսահակյանի տարբեր ստեղծագործություններում՝ նշելով դրանց ներքին պատճառներն ու գաղափարական հիմքերը: Օգտվել դասագրքից, համացանցից կամ այլ աղբյուրներից: Պատրաստել սահիկաշար, էլեկտրոնային և թղթային կրիչներով ներկայացնել աշխատանքը: | 13. 11-16. 12. 2025 | 19. 12. 2025թ. |
| 4 | Զալիբեկյան Մերի | Ընթերցել Ավ. Իսահակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքը, Օհանամու անունից գրել նամակ՝ ուղղված գալիք սերունդներին: Օգտվել դասագրքից, համացանցից կամ այլ աղբյուրներից: Պատրաստել | 13. 11-16. 12. 2025 | 19. 12. 2025թ. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | սահիկաշար,<br>Էլեկտրոնային և<br>թղթային<br>կրիչներով<br>ներկայացնել<br>աշխատանքը: | | |